

իրենց թագաւորին դէմ ապստամբութեան մղելով զանոնք, որպէս զի Կոստանդինը զահրնկեց ընել տալով զինքը թագաւորեցնեն: Եւ յաջողեցաւ ալ Նոյն 1372 տարւան վերջերը կամ 1373-ի սկիզբները « գաղանի » պատգամաւորութիւն մը կը հասնէր Կիպրոս, Լեւոնն հրաւիրելու համար Սիւ . բայց որովհետեւ Լեւոն չէր կրնար առանց Պետրոսի արտօնութեան հետանալ Կիպրոսէն, իր տակաւին անպատրաստ եւ անզօր վիճակի մէջ գտնուելը յայտնելով՝ ետ դարձուց պատգամաւորները :

Պատգամաւորներն հաղիւ Սիւ վերադարձած էին, եւ անձ օր մըն ալ՝ Կոստանդին Դ-ի սպանուելուն: գոյժը տարածուեցաւ ամբողջ քաղաքին մէջ (1373 ապրիլ), եւ թագապահ կարգուեցաւ Կոստանդին Դ-ի կինը Մարիամ :

Հայերն այս անգամ երկրորդ պատգամաւորութիւնով մը եւ կաթողիկոսին ու իշխաններուն կողմէ զրուած թղթերով զիմեցին ուղղակի Պետրոսին, խնդրելու համար Լեւոնը. բայց այս ձեռնարկն ալ անյաջող անցաւ. վասն զի Պետրոս առարկեց, թէ առ այժմ պէտք ունի Լեւոնի անկախութեան՝ պատերազմի բռնուած ըլլալով Գենուացիներու հետ: — Պատգամաւորութիւնը զիմեց նաեւ Լեւոնի, նոյնպէս կաթողիկոսին ու իշխաններուն կողմէ ստորագրուած հրաւիրաթղթով ու գաշնազրութիւնով. բայց Լեւոն չկրցաւ թոյլտուութիւն ստանալ Պետրոսէն. ուստի պատգամաւորներն յայտնեց, որ մինչեւ իր գալուստը՝ Հայաստանի առժամեայ խնամակալ եւ կառավարիչ կը կարգէ՝ 1) Հայոց նախկին գլխոն՝ Մարիամը, 2) իր Պեմունդ հօրեղբոր այրին՝ Ռեմի կամ Յիմի կոմսուհին (1), 3) այս Պեմունդի անհարազատ որդին Բարթողիմէն եւ 4) պարոն Թորոսի որդին պարոն Վասիլը: Այսպէսով պատգամաւորներն հեռացան եւ անազին դժուարութիւններով, նոյն իսկ թուրքի տարազով ծպտուած, գացին մասն Սիւ: Ճամբաները բոլորովին դոցուած բռնուած էին թշնամիէն. միակ Սիւ մայրաքաղաքն էր որ մնացած էր Հայերու ձեռքը. բայց այն ալ՝ պաշարուած էր Բէչդէմուրի զօրքերէն . . .

Լեւոն անուշ երազներով օրօրուելու վրայ էր եւ մինչեւ իսկ աչքին

(1) Այս սիկինը, որ Փիենա անունով յիշուած է Չաւչեանէ եւ ուրիշ հայ ու օսար պատմիչներէ, մինչեւ հիմա Լեւոն Ե-ի աղջիկն եւ Կոստանդին Գ-ի քոյրն ճիշտուած է: Ասիկայ ամուսնացած է նախ Կոնիկոսի կամ Պեմունդի, իսկ յետոյ Լեւոն Ե-ի գիւնակիին՝ Սոնիէրի հետ, եւ ո՛չ քէ Շահանի մը հետ, ինչպէս ընդունուած է առ հաւարակ: Շահանի մը գոյութիւնն իսկ կասկածելի է: